ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Վայոց ձորի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից 2019թ. կատարված աշխատանքների մասին

2019 թվականի ընթացքում մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը ղեկավարվելով բաժնի կանոնադրությամբ և բաժնին վերապահված գործառույթների, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների պաշտոնի անձնագրի պահանջներով՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶՊԵՏԻ և ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՅՔԷՋԻ <<ՏՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ԲԱԺՆՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Վայոց ձորի մարզպետի և մարզպետարանի գործունեության հրապարակայնությունն ապահովելու նպատակով կատարված աշխատանքների լուսաբանումն իրականացվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքէջի <<Նորություններ>> բաժնում տեղադրված նյութերով:

2019 թ. ընթացքում մարզպետարանի պաշտոնական կայքի <<Նորություններ>> բաժնում տեղադրվել են 357 լուսաբանական նյութեր, որոնք եղել են լրատվական բնույթի հաղորդումներ, ուղերձներ, հայտարարություններ, իրազեկումներ և լրատվամիջոցներին ուղղված պարզաբանումներ:

Դրանք արտացոլել են մարզպետի աշխատանքային գործունեությունը, մարզպետի՝ մարզի տարբեր համայնքներ կատարած աշխատանքային այցերը, մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելությունները, մարզի համայնքներում առկա սոցիալ-տնտեսական իրավիճակը, տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ մարզպետարանում հրավիրված քննարկումները, կրթամշակութային անցուդարձը, ինչպես նաև ՀՀ և օտարերկրյա պատվիրակությունների մարզ կատարած աշխատանքային այցերը, մարզպետի հանդիպումները հանրապետական և միջազգային տարբեր կազմակերպությունների կամ նրանց ներկայացուցիչների հետ և այլ բնույթի աշխատանքները:

Նյութերով համալրվել են նաև<<Տեղեկատվական կենտրոն>> բաժնի <<Ուղերձներ>>, <<Մարզպետի պաշտոնական և աշխատանքային այցեր, ընդունելություններ>>, <<Հանրակրթական հաստատությունների բյուջեները և կատարված ծախսերի հաշվետվությունները>> ենթաբաժինները:

Մարզպետարանի տեղեկատվության և հասրակայնության հետ կապերի բաժնի կողմից 2019 թվականի մարտի 18-ին բացվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ֆեյսբուքյան էջը և սպասարկվել:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԷՋԻ ԱՅԼ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Թարմացվել են <<Մարզպետարան>> բաժնի ենթաբաժինների նյութերը, որոնք առկա են բաժնի

- Մարզպետարանի մասին,
- Կառուցվածքը,
- Բյուջե,
- Հաշվետվություններ ,
- Հեռախոսահամարներ,
- Փաստաթղթաշրջանառություն ,
- ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ծառայողական ավտոմեքենաների վերաբերյալ ենթաբաժիններում:

2019 թ. ընթացքում պարբերաբար (ըստ անհրաժեշտության) թարմացվել են ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքէջի բաժինների և ենթաբաժինների նյութերը՝

<<**Համայնքներ>> բաժնի <<**Խոշորացված համայնքների կողմից էլեկտրոնային եղանակով իրականացված գործառույթների և տրամադրված ծառայությունների վերաբերյալ>>, <<ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքներում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները>>, <<Համայնքների բյուջետային եկամուտներ>>, <<Համայնքների բյուջետային ծախսեր>> ենթաբաժինների,

<<Ծրագրեր և փաստաթղթեր>> բաժնի <<Գնումներ>> ենթաբաժնի,

<<Արտաքին կապեր>> բաժնի <<Ծրագրեր և հաշվետվություններ>> ենթաբաժնի,

<<Իրավական ակտեր>> բաժնի <<Մարզպետի որոշումներ>>, <<Մարզպետի կարգադրություններ>>, << Օրենքներ>> ենթաբաժինների,

<<Կազմակերպություններ>> բաժնի (ենթաբաժիններ, որոնցում ընդգրկված կազմակերպությունների ղեկավարների փոփոխություն է տեղի ունեցել),

<<Քաղաքացիների ընդունելություն>> բաժնի <<Ընդունելության արդյունքները եռամսյակային կտրվածքով>>, <<Ընդունելության արդյունքներն ամսական կտրվածքով >> ենթաբաժինների,

<<Ընտանեկան նպաստի և հրատապ դրամական օգնության ցուցակներ>> բաժնի <<Եղեգնաձորի տարածաշրջան>> , <<Վայքի տարածաշրջան>> ենթաբաժինների,

<<Հայտարարություններ>> բաժնի <<Այլ հայտարարություններ>>, <<Թափուր աշխատատեղերի համար մրցույթների հայտարարություններ>>,

<<Դիմեք մեզ և տեղեկատվության ազատություն>> բաժնի <<ՏԱ մասին ՀՀ օրենք, 7-րդ հոդված՝ Տեղեկությունների մատչելիության և հրապարակայնության ապահովումը>>, <<Տեղեկություն ստանալու մասին հարցումների վիճակագրություն>> ենթաբաժինների նյութերը:

Տարվա ընթացքում մարզպետարանի պաշտոնական կայքէջում բացվել է <<Հայաստանի Հանրապետության տարածքների համաչափ զարգացում>> բաժինը և ՀՀ ՏԿԵ նախարարության հանձնարարությամբ՝ հղում է տրվել համապատասխան էլ.հասցեին:

Բացվել է նաև <<Մարզպետարան>> բաժնի <<Ֆրանկոֆոնիա>> խորագրով ենթաբաժինը և ՀՀ արտաքին գործերի նախարարության գրության պահանջի համաձայն՝ բաժնում տեղադրվել է Ֆրանկոֆոնիայի 50 ամյակին նվիրված ՀՀ Վայոց ձորի մարզային միջոցառումների ցանկը, ինչպես նաև <<Համապետական շաբաթօրյակ>> բաժինը և մի շարք ենթաբաժիններ՝
<<Համայնքներ>> բաժնում՝ <<Համայնքի անձնագիր>> ենթաբաժինը, <<Մարզպետարան>> բաժնում՝ <<ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի 2020-2022 թթ. ՄԺԾԾ և 2020 թ. բյուջետային հայտը>> ենթաբաժինը, <<Ընդհանուր տեղեկություններ>> բաժնում՝ <<Ազգային փոքրամասնություններ>> ենթաբաժինը, <<Հայտարարություններ>> բաժնում՝ <<Համայնքային հողերի և հողամասերի աճուրդ-վաճառքներ>> ենթաբաժինը: Բոլոր ենթաբաժինները լրացվել են նյութերով:

Հանրային իրազեկում ապահովելու նպատակով մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը համագործակցել է զանգվածային լրատվության միջոցների, հասարակական կազմակերպությունների հետ:

Կազմակերպվել և լուսաբանվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կողմից կազմված 2020-2022 թվականների ՄԺԾԾ-ի (միջնաժամկետ ծախսերի ծրագիր), ներառյալ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի հայտերի նախագծերի, ինչպես նաև հայտերի հիմքում դրված ծախսային հաշվարկ-հիմնավորումների վերաբերյալ հանրային քննարկումը. հասարակական կազմակեպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Մարզպետարանի պաշտոնական կայքում ըստ համապատասխան բաժինների և էջերի տեղադրվել են պարտադիր հրապարակման ենթակա ամբողջ տեղեկատվությունը, (հետևյալ հասցում՝ http://vdzor.mtad.am/TAorenq7/):

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԵՎ ԲՈՂՈՔ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՁԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների կողմից Վայոց ձորի մարզպետարանին արվել է 27 գրավոր հարցում, որոնց բոլորին օրենքով սահմանված կարգով և ժամկետներում տրվել են պատասխաններ և տեղադրվել են մարզպետարանի կայքէջում:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի
տեղեկատվության և հասարակայնության
հետ կապերի բաժնի պետ՝ **Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

09.01.2020